ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆԻՍ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Ստորև թվարկվածներից ո՞րն է համարվում բնական աշխարհահամակարգ։**

1) քաղաքը
2) ջրամբարը
3) անտառը
4) արոտավայրը

2 **Ստորև թվարկված միտումներից որի՞ պարագայում են մարդկության առջև ծառացած բազմաթիվ հիմնախնդիրներ ստանում համամոլորակային բնույթ ու դրսևորումներ։**

1) գլոբալացում
2) մաթեմատիկացում
3) էկոլոգացում
4) սոցիոլականացում

3 **Ո՞րն է տեղանքում կողմնորոշման առավել ճշգրիտ միջոց.**

1) Բևեռային աստղը
2) Արեգակը
3) լիալուսինը
4) կողմնացույցը

4 **1 : 50 000 000 մասշտաբ ունեցող գլոբուսի վրա երկու կետերի հեռավորությունը 5,6 սմ է։ Որքա՞ն կլինի դրանց իրական հեռավորությունը.**

1) 8750
2) 6800
3) 1450
4) 2800

5 **Ստորև թվարկվածներից ո՞րն է ձևավորվում երկրագնդի պտույտի և միջուկում նյութերի տեղաշարժերի անմիջական պատճառով։**

1) քարոլորտը
2) մագնիսական դաշտը
3) բևեռափայլը
4) ավազային անապատը

6 **Ստորև թվարկվածներից ո՞ր ժամանակաշրջանն է մտնում կայնոզոյան դարաշրջանի մեջ։**

1) օրդովիկ
2) կարբոն
3) նեոգեն
4) տրիաս

7 **Ստորև թվարկվածներից ո՞ր ապարն ունի փոխակերպային ծագում։**

1) կավիճ
2) բազալտ
3) ածուխ
4) քվարց

8 **Ո՞րն է Խաղաղ օվկիանոսի օվկիանոսային հոսանքներից։**

1) Բրազիլական
2) Պերուական
3) Բենգելյան
4) Գոլֆստրիմ

9 **Ստորև թվարկվածներից ո՞ր լիճն ունի մնացորդային ծագում։**

1) Արալյան
2) Բայկալ
3) Աժդահակ
4) Սևանա

10 **Մթնոլորտի ո՞ր շերտն է տարածվում 50-55 կմ բարձրություններում։**

1) վերնոլորտ
2) արտաքին ոլորտ
3) ներքնոլորտ
4) օզոնային շերտ

11 **Ստորև թվարկվածներից ո՞րը կլիմայաստեղծ գործոն *չէ։***

1) գերիշխող քամիներ
2) աշխարհագրական լայնություն
3) ամպամածության աստիճան
4) տեղանքի բարձրություն

12 **Ստորև թվարկված հողատիպերից ո՞րն է ամենաշատը պարունակում հումուս։**

1) սևահողեր
2) պոդզոլային հողեր
3) դեղնահողեր
4) կարմրահողեր

13 **Որտե՞ղ են ստեղծվում օազիսները։**

1) սավանաներում
2) սելվասներում
3) անապատներում
4) կամպոսներում

14 **Ստորև թվարկվածներից ո՞ր նեղուցով է Մադագասկարը բաժանվում Աֆրիկայից։**

1) Դարդանելի
2) Մոզամբիկի
3) Ջիբլարթարի
4) Բոսֆորի

15 **Ստորև թվարկվածներից ո՞ր քամիներն են ձևավորվում Աֆրիկայի արևադարձային գոտիներում և փչում են դեպի հասարակած։**

1) թայֆուն
2) տոռնադո
3) մուսսոն
4) պասսատ

16 **Ստորև թվարկվածներից ո՞ր ծովածոցն է ողողում Ավստրալիայի ափերը։**

1) Կարպենտարիա
2) Ադենի
3) Հուդզոնի
4) Գվինեական

17 **Ստորև թվարկվածներից ո՞ր կենդանին է ապրում Անտարկտիդայում։**

1) համրուկ
2) կենգուրու
3) պինգվին
4) բադակտուց

18 **Ստորև թվարկվածներից ո՞ր ծառն է աճում Հարավային Ամերիկայում:**

1) սեքվոյա
2) էվկալիպտ
3) սեխածառ
4) կազուարիա

19 **Ստորև թվարկվածներից ո՞ր բնական զոնան է տարածված Հյուսիսային Ամերիկայում:**

1) լյանոս
2) պրերիա
3) սելվաս
4) պամպա

20 **Ստորև թվարկվածներից ո՞ր լեռնաշղթան է գտնվում Հյուսիսային Ամերիկայում:**

1) Կապի
2) Ապալաչյան
3) Ատլասի
4) Սկանդինավյան

21 **Ստորև թվարկված գետերից ո՞րը *չի* հոսում Եվրասիայով:**

1) Մուրեյ
2) Մեկոնգ
3) Ամուր
4) Յանցզի

22 **Ստորև թվարկված սարահարթերից ո՞րը *չի* գտնվում Եվրասիայում:**

1) Դեկանի
2) Արաբական
3) Գոբի
4) Լավրենտյան

23 **Ստորև թվարկվածներից ո՞ր գործող հրաբուխն է գտնվում Հարավային Ամերիկայում:**

1) Կրակատաու
2) Էտնա
3) Կոտոպախի
4) Հեկլա

24 **Նշված պետություններից ո՞րն է ձևավորվել աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման հին փուլում։**

1) Ղազախստան
2) Ասորեստան
3) Բյուզանդիա
4) Պորտուգալիա

25 **Հետևյալ գետերից որի՞ ափին է ձևավորվել շումերական քաղաքակրթությունը։**

1) Արաքս
2) Յանցզի
3) Նեղոս
4) Տիգրիս

26 **Նշվածներից ո՞րն է համարվում անկլավ։**

1) Սան Ֆրանցիսկո
2) Սան Դիեգո
3) Սան Պաուլու
4) Սան Մարինո

27 **Նշված գործոններից ո՞րը *չի* ազդում բնակչության տեղաբաշխման վրա։**

1) բնական
2) ժողովրդագրական
3) պատմական
4) կրոնական

28 **Ժողովրդագրական անցման ո՞ր փուլն է կապված տնտեսության զարգացման հետարդյունաբերական փուլի հետ։**

1) չորրորդ
2) առաջին
3) երկրորդ
4) երրորդ

29 **Նշվածներից ո՞ր երկրում է կյանքի միջին տևողությունը առավել երկար։**

1) Կոնգո
2) Մոզամբիկ
3) Իտալիա
4) Անգոլա

30 **Շաքարի արտադրության տեղաբաշխման վրա ո՞ր գործոնն է առավելապես ազդում։**

1) վառելիքաէներգետիկ
2) հումքային
3) էկոլոգիական
4) աշխատանքային

31 **Նշվածներից ո՞ր երկիրն է համարվում կապիտալի խոշոր արտահանող։**

1) Ղրղզստան
2) Աֆղանստան
3) Չինաստան
4) Տաջիկստան

32 **Նշվածներից ո՞ր կրոնը տարածված *չէ* ՌԴ-ում։**

1) բուդդայականություն
2) քրիստոնեություն
3) մահմեդականություն
4) սինտոյականություն

33 **Նշվածներից ո՞ր թերակղզին *չի* գտնվում Հարավային Եվրոպայում։**

1) Սկանդինավյան
2) Պիրենեյան
3) Ապենինյան
4) Բալկանյան

34 **Արևմտյան Եվրոպայի ո՞ր երկիրն է առավելապես անտառապատ։**

1) Շվեյցարիա
2) Ավստրիա
3) Գերմանիա
4) Ֆրանսիա

35 **Հյուսիսային Եվրոպայի արդյունաբերության ճյուղերից ո՞րն է առաջատար։**

1) մեքենաշինություն
2) սննդի արդյունաբերություն
3) էլեկտրաէներգետիկա
4) մետաղաձուլություն

36 **Նշվածներից ո՞ր տարածաշրջանն է առաջատար փյունիկյան արմավի արտադրությամբ:**

1) Հարավարևելյան Ասիա
2) Արևելյան Ասիա
3) Հարավարևմտյան Ասիա
4) Հարավային Ասիա

37 **Հնդկաստանի ուղևորափոխադրումներում տրանսպորտի ո՞ր տեսակն է առաջատար:**

1) օդային
2) ավտոմոբիլային
3) երկաթուղային
4) ծովային

Քարտեզ 1



38 Քարտեզ 1-ում Ը տառով ո՞ր նավահանգիստն է նշված։

1) Սինգապուր
2) Տոկիո
3) Թայբեյ
4) Շանհայ

39 Քարտեզ 1-ում Զ տառով ո՞ր գետն է նշված։

1) Մեկոնգ
2) Յանցզի
3) Հուանհե
4) Ամուր

40 Հետևյալ թելատու մշակաբույսերից որի՞ մշակմամբ է Աֆրիկան առավելապես առաջատար։

1) գանգրավուշ
2) սիսալ
3) բամբակենի
4) ջութ

41 Լատինական Ամերիկայի մայրաքաղաքներից ո՞րն է գտնվում ավելի քան 3700 մ բացարձակ բարձրության վրա։

1) Կիտո
2) Սան Խոսե
3) Լիմա
4) Լա Պաս

42 Հետևյալ գիտնականներից ո՞րը *չի* այցելել Հայաստան։

1) Ալիշան
2) Հերոդոտոս
3) Պտղոմեոս
4) Քսենոֆոն

43 Ո՞ր լեռների արևելյան եզրին է գտնվում Թոնդրակ լեռնագագաթը։

1) Զավախքի
2) Ծաղկանց
3) Գեղամա
4) Ծաղկավետ

44 **Հետևյալ հանքավայրերից որո՞ւմ կա նեֆելինային սիենիտ։**

1) Արզնի
2) Շվանիձոր
3) Արթիկ
4) Մեղրաձոր

45 **Հետևյալ բնակավայրերից որո՞ւմ է արևափայլի տևողությունը ամենաերկարը։**

1) Մարտունի
2) Արենի
3) Գյումրի
4) Արտենի

46 **Հետևյալ դաշտերից որո՞ւմ կան աղուտներ.**

1) Արարատյան
2) Լոռվա
3) Շիրակի
4) Մասրիկի

47 **Հետևյալ հատուկ պահպանվող տարածքներից ո՞րն է համարվում ազգային պարկ։**

1) Շիկահողի
2) Էրեբունու
3) Դիլիջանի
4) Խոսրովի

48 **Վաչագան և Կավարտիջուր վտակները ո՞ր քաղաքով են հոսում։**

1) Հրազդան
2) Սևան
3) Իջևան
4) Կապան

Քարտեզ 2



49 **Քարտեզ 2-ում Բ տառով ո՞ր սարահարթն է նշված:**

1) Կոտայքի
2) Ապարանի
3) Սիսիանի
4) Եղվարդի

50 **Քարտեզ 2-ում Դ տառով ո՞ր մարզն է նշված:**

1) Գեղարքունիք
2) Սյունիք
3) Արագածոտն
4) Տավուշ

51 **Մինչև քանի՞ հազար բնակիչ ունեցող բնակավայրերում են կառուցում բուսատեխնոլոգիական մաքրման կայաններ։**

1) 5000
2) 20000
3) 10000
4) 9000

52 **Զարգացած արդյունաբերական երկրներում առավելապես ի՞նչն է նպաստում հողերի վատթարացմանը։**

1) հողի վերին շերտի քայքայում
2) աղակալում
3) քիմիական աղտոտում
4) գերարածեցում

53 **Ո՞ր նյութերի արտանետման պատճառով են առաջանում թթվային տեղումներ։**

1) աղային միացություններ
2) ածխածնային միացություններ
3) ազոտական միացություններ
4) ծծմբային միացություններ

54 **«XXI դարի օրակարգը» ո՞ր քաղաքում է ստորագրվել։**

1) Ռիո դե Ժանեյրո
2) Ստոկհոլմ
3) Կոպենհագեն
4) Յոհաննեսբուրգ

55 **Ֆրանսիայի և Գերմանիայի միջև ո՞ր տարածքն է համարվում վիճելի։**

1) Տրանսիլվանիա
2) Սաար
3) Սիլեզիա
4) Տրիեստ

56 **Գրել այն ջրաէլեկտրակայանների համարները, որոնք գտնվում են Որոտանի գետային համակարգում։**

1) Տաթևի
2) Արգելի
3) Արզնիի
4) Սպանդարյանի
5) Քանաքեռի
6) Զորագետի
7) Շամբի
8) Շաքիի

57 **Գրել այն լճերի համարները, որոնք ունեն սառցադաշտային ծագում։**

1) Սև
2) Աժդահակ
3) Արմաղան
4) Պարզ
5) Ակնա
6) Քարի
7) Կապույտ
8) Արփի

58 **Գրել այն քաղաքների համարները, որոնք համարվում են ԱՄՆ-ի մեքենաշինության կենտրոններ։**

1) Մյունխեն
2) Շտուտգարտ
3) Դետրոյթ
4) Վոլֆսբուրգ
5) Չիկագո
6) Կիոտո
7) Թուրին
8) Թուլուզ

59 **Գրել այն խառը ռասաների համարները, որոնց ներկայացուցիչներն ապրում են Բրազիլիայում։**

1) եթովպական
2) ուրալյան
3) պարդո
4) սուդանյան
5) հարավսիբիրական
6) մետիս
7) մուլատ
8) սամբո

60 **Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Ատլանտյան օվկիանոս։**

1) Նեղոս
2) Կոլումբիա
3) Միսիսիպի
4) Վոլգա
5) Հուանհե
6) Կոլորադո
7) Ամազոն
8) Պարանա

61 **Գրել այն ծովերի համարները, որոնք ողողում են Հյուսիսային Ամերիկայի ափերը։**

1) Արաբական
2) Չուկոտյան
3) Կարիբյան
4) Բարենցի
5) Կորալյան
6) Դեղին
7) Հյուսիսային
8) Բերինգի

62 Արևելյան Եվրոպայի երկրները դասավորել հյուսիսից հարավ հաջորդականությամբ։

1) Ուկրաինա
2) Լեհաստան
3) Բուլղարիա
4) Ռումինիա

63 Հարավարևմտյան Ասիայի երկրները դասավորել հարավից հյուսիս հաջորդականությամբ։

1) Սիրիա
2) Քաթար
3) Օման
4) Իրաք

64 Գետի լայնակի կտրվածքի մակերեսը 8,4 մ է, ջրի արագությունը՝ 5 մ/վ, որոշել գետի հոսքը կես ժամում։

65 Քաղաքի բնակչությունը 50 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝ 600 մարդ։ Ներգաղթողների թիվը 2000 է, իսկ արտագաղթողների թիվը՝ 2400։ Որոշել քաղաքի բնակչության թիվը մեկ տարի հետո։

66 Երկրի բնակչության թիվը 180 000 է, ուրբանիզացման մակարդակը՝ 30%։ Որքա՞ն է քաղաքային բնակչության բացարձակ թիվը։

67 Տվյալ երկրի տարածքը 75000 կմ² է, իսկ ավտոճանապարհային ցանցի խտությունը՝ 2,5 կմ/կմ²։ Որքա՞ն է ավտոճանապարհների երկարությունը։

68 Որքա՞ն էլեկտրաէներգիա կարելի է ստանալ 4 տոննա նավթի այրումից (ջերմային գործակիցը՝ 1,5)։

69 **Աշխարհի մետաղաձուլության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Պղնձի արտադրությունը էներգատար է, ուստի տեղաբաշխվում է էժան էլեկտրաէներգիայի արտադրության շրջաններում։
2) Մետաղաձուլությունը արդյունաբերության նորագույն ճյուղերից է և բաժանվում է երկու ենթաճյուղի՝ սև և գունավոր մետաղաձուլության։
3) Սև մետաղաձուլության գլխավոր և ամենատարածված հանքային հումքը երկաթաքարն է։
4) Երկաթի հանքաքարի նախնական մշակումը կատարվում է հումքի արդյունահանման շրջաններում։
5) Սև մետաղաձուլության արտադրանքի ծավալով մի քանի անգամ զիջում է գունավոր մետաղաձուլությանը։
6) Ալյումինի արտադրությունը նույնպես հումքատար է ու տեղաբաշխվում է հումքառատ շրջաններում։

70 **Աշխարհի անասնապահության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Մեղվաբուծության արտադրանքի ծավալով աշխարհի առաջատար երկրներն են ԱՄՆ-ն, Մեքսիկան, Ֆրանսիան, Ռուսաստանը։
2) Հյուսիսային Եվրոպայի երկրների գյուղատնտեսության համախառն արտադրանքում մեծ է անասնապահության բաժինը։
3) Անասնապահության առաջատար ճյուղերն են ոչխարաբուծությունը և ուղտաբուծությունը։
4) Խոշոր եղջերավոր անասնապահության գլխաքանակով աշխարհում առաջին տեղում է Հնդկաստանը։
5) Խոզերի գլխաքանակով աշխարհում առաջատար են Հյուսիսային Աֆրիկան և Հարավարևմտյան Ասիան։
6) Այծաբուծությունը զարգանում է հզոր արտադրական համալիրներում, որոնք կառուցվում են բնակչությամբ խիտ բնակեցված շրջաններում։